

մեր աշխարհը լիովին իրականացաւ — ոչ միայն նոր իրան Միացեալ ընկերութեան մէջ — այլ ևս իրականութիւն դաս աշխարհի մի մարդու խմբի և համախոհների մէջ ևս, ինչպէս Ներսէս պատրիարքն է։ Ի՞նչ պիտի ասեն այս ամենից յետոյ և ինչով պիտի կարողանան իրանց խիղճը հանգստացնել այն փոքրոցի և ապիկար մարդիկ, որոնք փոխանակ քաջալերելու և սիրտ տալու մի օգտակար գաղափարի, աշխատում էին բոլոր ժամանակ վատաշէն ու վրասել այդ գաղափարը յայտնողների ջանքերը։

Այսպէս թէ այնպէս, երբ ճշմարտութիւնը աշխարհ փայլուն յաղթանակ տարաւ, մենք պարտաւոր ենք նախ՝ հրապարակապէս և բոլոր օրով մեր վերա՝ շնորհակալութիւնը յայտնել մեր բարեկամին, նրա կրած բոլոր նեղութիւնները և բարոյական զոհանքների համար, երկրորդ՝ հարկաւոր է խրատ առնել այս օրինակից միւս անգամ ազնաւոր և մարդավայել կերպով վերաբերվել դէպի այն զործիները, որոնց միակ միտքաբանութիւնը իրանց անշահախնդիր զործունէութեան մէջն է։

Կաս. Եւաղուբեան

ՆԵՐՏԻՆ ԼԱՌԵՐ

«Портрет» լրագրի մէջ կարդում ենք, որ Ս. Պետերբուրգի թիւրքաց զնայան, Շակիր փաշան, շատ յաճախ է այցելում այժմ արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ պ. Կիրովին։ Երանց խօսակցութեան առարկան, ինչպէս հաղորդում են առաւ լրագրին, զլուստրապէս լինում է ընթացող քաղաքական հարցերի մասին, որոնք վերաբերվում են երկու պետութիւնների փոխադարձ յարաբերութեանը։ Կեսպանը ներկայացրեց մի քանի, որի մէջ յայտնում է թէ ինչ ձևով թիւրքիան կամենում է վերջացնել իր դրամական հաշիւները Ռուսաստանի հետ և վճարել նրան վերջին պատերազմից զոյացած պատերազմական ծախսերը (կոնտրիբուցիան)։ Խօսակցութեան առարկան լինում է նոյնպէս և քաղաքական իշխանութիւնը, թիւրքիան գտն է քաղաքական իշխանի վերջին ժամանակ արած փոփոխութիւնից։ Ինչ որ վերաբերվում է Հայաստանի մէջ մտնելի բէֆօրմներին, Շակիր փաշան յայտնել է պ. Կիրովին, որ առժամանակ հայոց խնդիրը դեռ ևս չէ կարող իր վերջնական լուծումը ստանալ, որովհետև խնդրոտում ծագած անկարգութիւնները խուճում են ի։ Կրանց զիջումաներից իրանց ամբողջ ժամանակը և այդ հարցը գրաւում է նրանց ամբողջ ուշադրութիւնը։ Բացի սրանից հալոց խնդիրը, թիւրքաց զնայանի կարծիքով, չէ կարող այժմ քննված լինել այն պատճառով էլ, որ ազատամբական յուզումները Քիւրդիստանում դեռ ևս ճնշված չէ, իսկ նախ քան երկրորդ կատարելապէս կը խաղաղագլխի, ապարդիւն կը լինէր ձեռնարկել Հայաստանի մէջ բէֆօրմների մտցնելուն։

Այսօր, շաբաթ օր, ժամը 7-ին երեկոյան, թիւիլիսի Կայսերական օրիորդաց դպրոցում, գումարվելու են հայ ուսուցիչներ, որպէս զի եկող ամառը լինելու հայոց ուսուցչական ժողովի նախապարտաւորական ամենակարեւոր կարգադրութիւնների մասին խորհրդակցելու։ Այսօրվայ ժողովի մէջ պէտք է ընտրվի ապագայ ժողովի նախար պատրաստական, կամ կարգադրական յանձնաժողով։

«Портрет» լրագրում կարդում ենք որ այս օրերս լայն տեսաւ Ս. Պետերբուրգում վիմագրական ֆրանսիական լրագրի առաջին համարը, որ կրում է «Correspondance Universelle» անունը։ Լրագիրը կը հրատարակվի ամեն օր պ. Կորովինի խմբագրութեամբ և կարծես 275 բուրլ տարեկան։

Կ. Պոլսից մեզ հաղորդում են որ Վիեննայի «Ժուրնալ դ'Օրիան» լրագրին արգելվեցաւ թիւրքաց պետութեան մէջ մուտքը։ Ի հարկէ այդ արգելման պատճառը այն յօդուածներն են, որ ֆրանսիական լրագիրը նուրիւ է հայոց խնդրին։ Բայց ինչ կը շարի դրանով թիւրքիան, հարցնում է մեր թղթակիցը։ Այնու ամենայնիւ ամբողջ Եւրոպան կը կարգայ այդ թերթը և ի հարկէ նա դրանով աւելի էլ մեծ նշանակութիւն կը տանայ։

Եթ օրինակ մեր քահանաների տղիտութեանը չեն առ զգաւ զմամտորդիլ զանաւ կը մը

Հաւաքարի մի պարոն փող էր ժողովում Հայաստանի սովորող համար և մի ծանօթ քահանային էլ խնդրեց մասնակցելու այդ հանգանակութեանը։ Բայց սա ստանութեամբ մերթնց ասելով։ Ախպէր, ով ասես Հայաստանի համար փող ա հաւաքում, փող ա դրում, քառ եարար Աստուծոյ, էդ Հայաստան քաղաքը չը կըտացաւ։ Բնիւն հիմա, իսկի խնդրա չէ կորուսել։ Արեւմտէր հայրը կարծում էր թէ Հայաստանը մի քաղաք է։

Մեզ հաղորդում են որ սեպտեմբերի 29-ի զինքը Շակիր-փաշայ ամբած թիւիլիսի թաղի Ս. Լուսաւորի եկեղեցու մօտ, Կողիւթի բաղանիքի կամուրջի վրա մի մարդ են սպանել։ Սպանվածը, ասում են ֆրանսիացի է եղել, որի գրպանում գտնվել է 180 բուրլ փող, թշուառ ֆրանսիացուն ոչխարի պէս մորթել են շարագործները և փախել են։ Բայց զարմանալին այն է, որ փողերը չեն տարել։ Երեկ շարագործները այդ հրէշային գործը կատարելիս, մարդիկ են վրա հասել և այդ պատճառով փողերը տանել չը կարողացան։

Թիւիլիսի վանքի մայր եկեղեցու աւագ քահանայ տէր Բովաննէս Սարգսեանց, որ արդէն երեք ամիս զրկված է եղել իր քահանայական թէ ժողովրդի և թէ քանանական արդիւնքներից, վերջապէս այս օրերս ստացաւ կոնսիստորիայից իր երեք ամսվայ արդիւնք 23 բուրլ և 5 կոպէկ։ Արտանագրական աւագ քահանան հասցրեց մեր խմբագրութեանը այդ 23 բուրլ 5 կոպէկ, որպէս զի ուղարկենք այդ գումարը Կ. Պոլսի Միացեալ ընկերութեանը։ Չը մոռանանք որ տէր Բովաննէս աւագ քահանան, ինչպէս որ տպւեցաւ իր ժամանակին, կարճ ժամանակում նուրիւց 200 բուրլ թէ Միացեալ ընկերութեան և թէ Սովետական ժողովին։

Տէր-Բովաննէսի վրա խօսելով, ահա մայր յիշում ենք այն պատիժը, որին ենթարկված է այդ արժանաւոր հոգիւր։ Եթէ այսքան խիստ կերպով և անտրջ ժամանակով հոգեւոր իշխանութիւնը պատժում է մի այդ տեսակ արժանաւոր քահանային, մի իրր թէ չըտաւ արտաքին համար, որին ինչ պէտք է անի այն բոլոր քահանաների հետ, որոնք զրկվել ամեն օր պատկում են թիւիլիսի հարուստ հայ ընտանիքներում ամենամոթիկ ազգականներին և այդ գիտէ ամբողջ քաղաքն էլ ու երեք էջմիածինն էլ։ Անցեալ տարին Կորուսեց իշխանին թոյլութեամբ պատկեցին մի աղջիկ և մի տղայ, որոնք երկու հարազատ եղբայրների դասակներ են։ Իսկ տէր Բովաննէսին պատժում են, որովհետև նա հետու ազգականներին է պատկել և այդ պատիւը չըտաւ են համարում։

Շնորհակալութեամբ ստացանք Արեւն քահանայաւորուց նրա հրատարակած զիբը (Տասն պատգամը, կամ բարոյական պարտաւորաց վերաբերում) Կիբը տպված է թիւիլիսում Բովն. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թ. Բովն. Շապուրում և Կենտրոնական գրախոսաւորուցում զինք 25 կոպէկ է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՐԱՆՍԻԱ

Բարեկեան Սենտ-Իլեր ներկայացրեց հանրապետութեան նախագահին Ֆրանսիայի զնայանների զեկուցումը այն հարցի առիթով, թէ ինչպէս կը վերաբերվի Եւրոպան այն իրողութեանը, եթէ կառավարչական զեկը անցնի Գամբետայի ձեռքը։ Այդ գործի կարելութիւնը կասկածելի է և երբ պական պետութիւնների համար, որովհետեւ նրանք համոզված են, որ Գամբետայի քաղաքականութիւնը վրէժխնդրութեան քաղաքականութիւն կը լինի և որ նա կը խանգարէ Եւրոպական խաղաղութիւնը։ Պատգամաւորների ապագայ ժողովի մեծամասնութեան ազդեցութիւն ունեցող անդամները հաղորդեցին Գամբետային իրանց դիտաւորութիւնը նրան ժողովի ժամանակ։

Մանակաւոր նախագահ ընտրելու մասին, որպէս զի Կրեյի ի նկատի ունենայ, որ Գամբետայ մեծամասնութեան իսկական առաջնորդ է, հետեւապէս մինիստր նախագահի պաշտօնի իսկական կանգիդատու Այնուհետեւ պատգամաւորների ժողովի նախագահ կընտրվի Բրիտան։ Գամբետայ պատգամաւորների, որ ինքն կատարելապէս կը հպատակվի մեծամասնութեան կամքին և կընդունի ամեն տեսակ պարտականութիւն, որ նրա վրա կը գնեն։ Այդպիսով շուտով կազմվելու է Գամբետայի մինիստրութիւնը և այնպիսի մի ժամանակ, երբ նրա ժողովրդականութիւնը առաջնայ պէս մեծ չէ։ Այժմ Գամբետայի վրա այնքան յայն չեն դնում, որքան մի քանի տարի առաջ էր։ Գամբետայի բազմաթիւ կողմնակիցները և բարեկամները նրան աւելի վստահել, քան թէ նրա բոլոր թշնամիները միասին։ Նրա մաքարում իր թըշնամիների դէմ նրան փառքով էր շրջապատում, մինչդեռ բարեկամների մատուցած ծառայութիւնները նրա դէմ գրգուռ էին ամբոխին։ Գամբետայի օրգան համարված լրագիրների գործադրած անխուհեմ քաղաքական միջոցները, նրանց կատարելա լուծութիւնը այն առարկաների մասին, որոնք յարմար չէին Գամբետայի կուսակցութեան համար, նրանց պաշտպանութիւնը պատերազմական մինիստր Ֆարի սիստերին, նրանց շափաղանց շողորթութիւնը հանրապետականների առաջնորդին, այս բոլորը վերաբերում էին Գամբետային և այդ հանգամանքը նրան վստահում էր։ Կես անցեալ տարի Գամբետայի մինիստրութիւնը ֆրանսիացիների համար մի քանակալի բան էր, իսկ այժմ միայն Գամբետայի բարեկամները անհամբերութեամբ սպասում են, որ կազմվի այդ մինիստրութիւնը։ Մտաւոր ապագան ցոյց կը տայ արդեօք կաջողվի Գամբետային վերականգնել իր բարոյական հեղինակութիւնը ժողովրդի առաջ։ Առժամանակ մամուլը նրա վրա անհաւատալի մեղադրանքներ է բարձրում։ «Figaro» լրագիրը տպել է նրա հարուստ մօլաքթը նամակը, որի մէջ վերջինը գանդաւորում է, իրր թէ Գամբետայ նրան չէ օգնում և կատարելա ազգաւորութեան մէջ է թողնում։ Նորիւումս Բօշֆօրի լրագիրը մի յօդուած էր տպել, որով մեղադրում էր Գամբետային, թէ նա առաջուց էման գնեւով ձեռք էր բերել Տուրիսի արժէթղիները և թէ այժմ յարուցել է արհեստական ծանաւարհով Տուրիսի դժուարութիւնները փող վատակելու համար։ Երեկ Բօշֆօր դատաստանի կենթարկվի բամբասանքի համար։

Արտաքին գործերի մինիստր յաննէլ է Տուրիսի մինիստր տեղապահ Բուստանին դատաստանական գործ սկսել Բօշֆօրի դէմ Գամբետային և Բուստանին ֆինանսական խաղաղութիւնների մէջ մեղադրելու համար։ Արմատականների լրագիրները այնու ամենայնիւ շարունակում են այդ մեղադրանքները։

Ժիւլ Ֆերրի մի շրջաբերականով հրամայեց պրեիկետներին օրիորդաց ուսումնականներ հիմնել այն ծուխերի մէջ, ուր խնայողութեան համար փոքր դատաստանների աշակերտուհիներին ուղարկում են կոյսերի պահած մասնաւոր ուսումնարաններում։ Միևնաւոր նկատում է, որ այդ ուսումնարանների մէջ օրիորդներին մեքենաբար են սովորեցնում, աշխատելով ցոյց տալ ծնողներին, որ թաշակադարմ ի դուր չէ վերցնում։ Երբ Ֆերրի Մօնտու-Վօրէի մէջ այցելեց ուսումնարաններին և այլ հիմնարկութիւններին, տեղական քաղաքագլուխը

ասեց նրան հետեւեալը. «Շնորհակալ ենք, որ դուք ոչնչացրիք այն կեղծ հիմնարկութիւնները, որոնք կրօնական ընկերութիւնների դիմակի տակ ի շարն էին գործ դրում։ Ֆրանսիացիների հաւատարմութիւնը Յոյս ունենք, որ հանրապետական կառավարութիւնը մինչև վերջը կը տանի իր գեղեցիկ գործերը և կատարելապէս աշխարհական հիմնարկութիւն կը դառնայ հաւատարկական կարծիքի ցանկութեան համեմատ»։

Ժիւլ Ֆերրի ներկայացրեց մինիստրների խորհրդին, որից դարձեալ բացակայ էին Կոնտան և Կազօ, իր խորհրդակցութիւններին հետեւեալները հանրապետական նախագահի հետ Կես ևս ոչինչ չէ վճարած մինիստրութեան հրաժարականի կամ փոփոխութեան մասին։ Կրեյի մի շրջաբերական կուղարկի պատգամաւորների ժողովին և պարզամեծական նիստերի սկսվելու ժամանակ կը վճարի այժմեան մինիստրութեան վիճակը։ Անհաւանքի լրագիրները շարունակ մեղադրանքներ են բարձրած քաղաքական առաջնակարգ զործիների վրա։ «Lanterne» լրագիրը հրատարակեց երկու հետազոտներ, որոնց Կրեյի բարեկամները նրա յանձնարարութեան համեմատ ուղարկել էին Տուրիս, բայց որոնք տեղ չէին հասել, որովհետև Բարսէլի մի Սենտ Կիւր ներանց կալանաւորել էր։ Այդ հետազոտները այն ժամանակն են ուղարկված, երբ զաշնագիր էր կապվում Տուրիսի բէյի հետ, և ապացուցանում են, որ Կրեյի առանձին հաւատ չէր ընծայում իր մինիստրներին և նրանց գործակաւորներին, որոնք իրր թէ ծածկում էին նրանից կատարվող բանակցութիւնների մի քանի մանրամասնութիւնները։ Այս մեղադրանքները դեռ ևս հերքված չեն։ Հալափ ընկերութեանից՝ Տուրիսի հարցի քննութեան ժամանակ զխաւոր զործիչ Բուստան հրաման է ստացել արտաքին գործերի մինիստրից ապագրական նոր օրէնքի հիման վրա դատ սկսել Բօշֆօրի դէմ։ Բօշֆօրին իրաւունք կը արվի ապացոյցներ ներկայացնել Բուստանի և այլ նշանաւոր զործիների գրաւական խորհրդարկութիւնների մասին։ Կործը կը քննել երգուեալ դատաւորները։ Կործը շատ հեռաքիւր է լինելու, որովհետև վիաների թըշուառ են Գամբետայ, Շալմէ-Լաւուր և ուրիշները։

Այժմեան մինիստրութեան անդամներից երկուսը՝ Կոնտան և Կազօ, որոնք Գամբետայի կողմնակիցներ են, նոր ընտրութիւններից յետոյ գրեթէ բոլորովին չեն մասնակցում մինիստրական խորհուրդներին։ Կոնտան մի ծառ արտասանեց իր ընտրողների առաջ, որից ոչինչ չէ կարելի կըրաւ կացնել ապագայի վերաբերութեամբ։ Նա ասաց, որ հանրապետական կառավարութիւնը պէտք է հաստատու գոգուշութեամբ գործէ։ Նա չը պէտք է տայ այնպիսի խոստումներ, որոնց չէ կարող կատարել։ Սենտ Կիւր փոփոխութեան մասին մինիստրը ոչինչ չասաց։ Նա հերքեց այն համոզումը, իրր թէ կառավարութիւնը երբ և իցէ գիտաւորութիւն է ունեցել ծննդի կրօնը։ Այդպիսի միջոցները նա ապօրինի է համարում։ Բայց հողեւորականութիւնը պէտք է իր չափը ձանաչէ և չը խառնվի աշխարհական գործերի մէջ։

ԿԵՐԱՆԻԱ

Բիւմարկի հաշտուելը Վառիկանի հետ և նրա յայտնի բարեկամութիւնը նոր նշանակված Եպիսկոպոս Կորուսի հետ չէ

յապագային ցոյց տալ իրանց հետեւանքները Լեւոնիստի և պէտք էր ստիպել վատիկանին արած գիշտութիւնը դուր չեկան պահանջողականներին, և մանաւանդ օրինաւորապէս՝ աւետարանական հոգեւորականութեան կուսակցութեանը: Այդ կուսակցութիւնը մինչեւ այժմ համընդհանուր գիմնական էր կրօն, և նրա օրդանները շատ անգամ պատարհանուած էին թէ «կուսակցական» զէմ գործ դրած խիստ միջոցները, և թէ եկեղեցու հետ կուսի սկզբունքը: Այդ լրագիրները յաճախ աշխատում էին մինչև անգամ հաւատացնել, որ այդ կուսի ոչ թէ Ռիսմարկն է սկսել, այլ ազատամիտները, որոնց նպատակն է՝ անհատականութիւն տարածել ժողովրդի մէջ: Ինքն իրան հասկանալի է, որ այդ գեղեցիկ խօսքերը գործով չէին հաստատուում, և երբ պարզամտութեամբ հարց էր ծագում կախժօրիկ եկեղեցուն մի որ և է զիջում տեսնու մասին, այն ժամանակ պահանջողականները հակառակ ձայն էին տալիս, բացատրելով այդ, ի հարկէ, նրանով, որ նրանք, որպէս կառավարութեան կուսակցութիւն, պարտաւոր են պաշտպանել միջնորդութեան կարծիքը: Իսկ այժմ, երբ Բիսմարկ յայտնի կերպով հաշտուց վատիկանի հետ և նրան ամեն տեսակ զիջումներ է տնուում, երբ խօսում են մինչև անգամ պապի դեսպանի ընդունու մասին, «օրինաւորականները» դրա զէմ կանգնեցին և ընդգիմագրութեան հետ միացան Միւս կողմից կուսակցականութիւնը վերջացնելը հարկաւոր տալարութիւն չը գործեց կենտրոնի վրա էլ և երբէք չը հեռացրեց այն անհամաձայնութիւնները, որ պատահում էին այդ կուսակցութեան մէջ պարզամտութեան և Բիսմարկի սեւախայի ժամանակ:

Կենտրոնի օրդանները անբաւական են նրանով, որ վատիկանի հետ բանակցութիւնները Բիսմարկ անմիջապէս էր տնուում: Ընդհանրապէս, նրանք համարեա ամեն օր կրկնում են, որ «կուսակցական կուսի» վերջացնելը ոչինչ ազդեցութիւն չէ կարող ունենալ կախժօրիկան կենտրոնի պարզամտական գրութեան վրա, որ նրանք կը շարունակեն իրանց պոլիմիքը ներքին խնդիրների վերաբերութեամբ բոլորովին անխախտ կերպով: Այս բոլոր հանգամանքները բոլորովին անպակասի հետեւանք ունեցան՝ այն է համաձայնութիւնը ազատամիտների օրդանների, պահանջողականների և կենտրոնի մէջ, որ չեղած փաստ է:

Իշխան Բիսմարկ, ինչպէս երևում է բոլորովին չէ փախեցած այդ նոր դրութիւնից, և իրան յատուկ եռանդով վերջացրեց բանակցութիւնները վատիկանի հետ: Արեւելք ի՞նչ էին այդ բանակցութիւնների հետեւանքները, ի՞նչ զիջումներ են արել միմեանց, այդ դեռ ևս յայտնի չէ: Միայն այսօր ծիշդ է, որ ապագայում եպիսկոպոսական ազատ տեղիքի վրա կը նշանակվեն եպիսկոպոսներ ընդլինի կառավարութեան և վատիկանի համաձայնութեամբ: Բացի դրանից մնում է ազատել արդիւնաւոր եկեղեցական կոչքերը և վերադարձնել նրանց եպիսկոպոսների իրաւասութեանը, մի և նոյն ժամանակ մնում է նոյնպէս զիջումատեղական յարաբերութիւններ կապել վատիկանի հետ պրոպագանդական գեղարվեստի միջոցով:

ցի յուզման, որ ասում է անտեսական հարց: Ձեր տարբերութեամբ, ասածները գործունէութեան զանազան փորձերով գիտել արդէն թէ ինչ ասել է արդարեւ խորագիրների հետ գործ և աւելցնել ինքնաշարժ: Մանկով լրագրական ապագայը զրգոված ոչ այն պահանջից, որ ասում է կուսակցականութեան և հրապարակախօսական, այլ միջոցով հրապարակ լուր պատահումների, ֆանտազիայի, իսկ այստեղ զվարարական կաշառաւորական հրապարակելից, նայ լրագրութիւնը մինչև այսօր դեռ մեծ մասամբ չէ հասած իր պաշտօնի և կուսակցականութեան ճանաչողութեան: Կա է պատճառը, որ մեզ մօտ խրաքանդութիւն օր կը տեսնէք անօրհական երեւոյթի պէս՝ մանաւանդ Կ. Պոլսի լրագրութեան վրա՝ այնպիսի խառն զանցաւորութիւն զէլի կենսական հասարակայնի հարցեր, այնպիսի պարտադանքութիւն և արհամարհանք, զէլի ճանաչողութիւն և զազախարական յայտնութիւններ, որ մարդ կը մնայ տարակուսած, չը հասկանալով թէ որն է նայ խորագիրների զեկաւորող մտաւոր և բարոյական սկզբունքը, որն է նոցա աշխարհայեցողութիւնը, որն է նոցա գործունէութեան պրոպագանդ, նպատակը, ուղղութիւնը, հոգին: Կը տեսնես, օրինակ, այս օր որ աղիւն էական շահերը բացորոշ կերպով փառաւոր են հասարակութեան ընտրած այս ինչ, այն ինչ սխալ ուղղութիւնից կամ թէ որ և է մի օգտաւոր նորամուծութեան պահանջութիւնից, կը նկատես այդ պահանջութիւնը և կը սկսես յայտնել թո կարծիք և առաջարկութիւններդ: Ինչ կերպայ յանկարծ այն, որ կարեւորութիւնը բացառաւոր ամենքի համար, որի ներմուծութեան ստիպողականութիւնը ճանաչած է ինքը հասարակութիւնը, որի անհրաժեշտ օգտքը ըզգում է և պահանջում ինքը ժողովուրդը, որի մասին փաստաբան կանգնելն անգամ անկողի է և ծիծաղելի՝ կը տեսնես յանկարծ որ հասարակաց շահերի և արհամարհութեան արտայայտելի և զեկաւորող լինելու պաշտօնը ստանձնած հայ լրագրիչները ըստ կանցին այնպիսի լեզու բանեցնել, այնպիսի ընթացք բռնել, որ կարծես թո ասածներդ լուսնի կամ արեգակի վրայից առած մի օտարութիւն, չը լսված և չմտածած բան լինեն: Անկարելի է, անժամանակ է, վաղահաս է, երեւակայական է, վրեւտակար է և այլն և այլն հարկը ու մէկ տեսակ դատողութիւններ կը լսես, չը հասկանալով թէ ինչպէս է ընթանում այս մարդկանց ուղիղ գործունէութիւնը, երբ կախժօրի սե են ասում, նախաին սպիտակ փէշ կանց կառնես, կընդմիջես և կը խոզնես, որ ժամանակ անցի, մէկ էլ տեսար նոյնը, ինչ անկարելի էր, վաղահաս, և երեւակայական և վրեւտակար թո ասած ժամանակը, այդ մի և նոյնը յանկարծ դառաւ շատ գործնական, շատ ազդեցատու, շատ պատեհաւոր և շատ հեշտ: Ինչու, որովհետեւ խօսողը հիմայ դու չես, այլ Պետրոսը, քարոզողը դու չես, այլ Կիրակոսը, ինքիցիստի ունեցողի փառքը, այսպէս ասած, քեզ չէ պատկանում, այլ իրան... Անցնէր խնդրեմ համապատասխանում է այնպիսի լրագրական ուղղութիւն մի խեղճ, նոր սկսող, նոր վերածննդ ազգի անհամար պահանջներին, մեծամեծ ցաւերին, յուզելի և անյապող կարգադրելի բազմաթիւ կարեւոր և կենսական խնդիրներին, յառաջանալու, ապրելու, ինքնաբերական կեանք և զարգացում ունենալու ձգտումներին...

Ի՞նչ կայ այդտեղ մի հատ միայն լրագիր այս ուղղութեան հետեւող, որա փոխաբեր այստեղ կայ միայն միւր, և թէ մէջ, այդ ուղղութեան չը հետեւող, էլ տեսնէք թէ որչափ ուղղման և ցաւելի դրութեան մէջ են խեղճ ասանկայների շահերը, որչափ անմիջապէս և մուր ճանապարհ վրա է ասանկայների մտաւոր և բարոյական բարեփոխում և վերածնութեան գործը... Կայ այստեղ մի հատ լրագիր, որը քառս տարի է վեր կատարում է այստեղ նոյն գերը, ինչ Վիշակը՝ ասանկայների մէջ արծարծել ժողովրդի մէջ թայտ և հանրագում գործնական մտքեր, մտքներ ժողովրդի մէջ ինքնակազմութեան և ինքնօգնութեան հոգին, ներքին ճանաչողութիւն իր սեփական ազգային արժանապատւութեան և մարդկային անհատական իրաւունքների, հարգել փրկած հոգիները, տարկացնող հասարակայնի նախապաշարմունքները, մնացած, պատաւական ընտանեկան և հասարակայնի դատարարութիւնը, հարուածել կեղտը, կեղծը և վատը, մերկացնել և հրապարակաւ մտարկել ծածկված և ստորերկրային խորշերում գտնուող թագի փնջիմայնեան

րեայ խորշերում գտնուող թագի փնջիմայնեան ներխաճութիւնը և խորշայն արարքները՝ անտեսելով Կ. Պոլսի միջոցով ի ֆէ Եւրոպայի բոլոր գործունէութեան նպատակը, յատկապէս բնաւորութիւնը և կատարած գերը:

Իսկ որն է եղել սորա զէմ բռնած ուղղութիւնը միւսների կողմից, հետեւելով լուսնի աշտեղ, որ էլ չը կայ գոնէ մի մասի չափ բան հերքելու և հակահանդիման համար, ծաղրել այնտեղ, որ յայտնված է այնչափ փայլուն միտք և լայն դատաւոր, որի զէմ ոչինչ նախաձեռնող առաքելութիւն չէ կարելի բերել: Խորշայն և մտտեղ այնտեղ, որ ժողովրդի համակրութիւնը չէ կարելի խեղդել և նուազացնել ոչինչ ընդգիմաբանական յոգեւածներով: Ահա սա է եղած և է մինչև հիմայ Վիշակի ազդեցութեամբ լրագրի կատարած իր 34 տարիայ գործունէութեան մէջ: Ինչպէս էք գտնում...

Հիմայ գտնել խնդրի և մեր զվարար նիւթի էութեան: Կ. Պոլսի գալու օրիցս ի վեր, ասեցի, մի քանի հարցերի շարքում սկսեցի քրքրել Մանգումէի մէջ և այն հարցը, որ ասում է անտեսական և Վիշակի հարցը, ինչպէս ձեռ յայտնի է, բնաւ մի նոր բան չէր, այլ արդէն մի քանի տարի առաջ յուզած էր և քարոզած Վիշակից աշտեղ, իսկ Մանգումէի էֆրեարը, Մանգումէի Վրեկանը այստեղ, նորա վրա խօսած էր, թէ այդ կեցկոտի և տիրացուական անհետեւեցութեամբ, նոյնպէս և ինքը Վիշակի: Այս անգամ իմ նախաձեռնութեամբ կրկին անգամ յարուցած այս անոյծ մնացած հարցի պատճառաւ բացվեցին միմարմնութիւններ, փաստաբանական և ճարտասանական պայքարներ, զանազան կողմերից դուրս եկան հին և նոր ուժեր, երեսն եկան և արծարծեցին նոր նոր տեսակետեր, առաջարկութիւններ, պարզ թէ բարդ պնդումներ: Ժողովուրդը սկսեց հետաքրքրվել շարժվել ու բացարձակ և բուն կերպով յայտնել իր համակրութիւնը մարմնաւոր կողմերից մէկին, մինչպէս այս բոլոր ժամանակ այն լրագիրը, որը պիտի առաջներ լինէր ժողովրդի ցանկութիւնները և տրամադրութիւնը արտայայտողը, նա որո՞ւմ էր գնում բոլոր խնդրեր խեղդել, սպանել և այս անգամ էլ առ միշտ գերեզման դրել ազգի մի այսչափ էական և կենսական պահանջի խնդիրը, ինչպէս է Հայաստանի ժողովրդի նիւթի և ինքնական և անտեսական վիճակի բարեփոխումը մեր ձեռքին և դա՞մ, մեզ անից կախված ազգային ուժերով:

Իայց բարեբախտաբար բանը հասաւ այնտեղ, որ ժողովրդի բարեփոխում արամադրութիւնը և ուժգին արթնութիւնից զրգոված միտքը, նորա միահամուռ ցանկութիւնը և համակրութիւնը պայման ու դուրս ցայտեղ այնպիսի բուն կերպով, որ էլ անհայտն և նաեւ փառաւոր կըլալ գիմագրութիւն ցոյց տալ նորան: Այդ օրից թէ ինչպիսի մնամորֆոզա պատահեց անօրինապատ և սկսեց գտնված Վիշակի: Հետ, կարող էք տեսնել սեպտեմբերի 22-ի նորա համարից, որի մէջ նա խօսում է այնպիսի կերպով, որ կարծես նորա բոլոր միջև հիմայ ասածները հարկաւոր էր միայն թարգմանել ինչ և ինչ այսչափ զփուարութիւններով վարած դատը տալու այնչափ փայլուն յաղթանակ, որ ներքին պատրիարք ինքը կըլալ բնաւ նորա շուրջը հասարակած ամենամեծ նիւթական և մտաւոր ուժերին իր օրհաններ և քաջաւորութիւնը տալու համար: Երեւելը նախաձեռնեց մի մեծ ժողովրդի որը կազմված էր Կ. Պոլսի համայն հայ գործիչների կազմելու համար, որ առ այժմ կերպից անտեսական մի ուժ էր Հայոց անուշով, ի հարկէ առ այժմ այս միայն անունն է, որը ճշգրիտ կերպով ցոյց է տալիս թէ անտեսական, որ և է գործի մէջ պարտաւոր են միմայ բոլոր հայերը առանց դասակարգի, զարգացման և կարողութեան խտրութեան, իսկ թէ ինչ կերպ է ինչ պրոպագանդ պիտի կարողանայ արդիւնաւոր լինել և փոխանել ապագայի ճանապարհ մտնել հայոց միարմնութիւնը Հայաստանի ժողովրդի անտեսական վիճակը բարեփոխելու համար, այդ մասին կը խօսեմ հետեւայն անգամ, յայտնելով ձեռ Վիշակի և ֆէ Եւրոպայի և սքանչելի պրփանտեանի կազմած այն հարց և սքանչելի պրբանը, որով այսչափ տարվայ մէջ իր գործնական պրոպագանդայի համար տանջված ու խաչված էր փառաստանը:

Հարուածել է աշխեղ այն կարեւոր խնդրի յուզման նա, որ վերաբերում է բնական զարգացման վիճակին: Վատիկան մէջ սկսեցին տպվել նորա յոգեւածները համայնների վրա առողջարանական տեսակետից, երբ կը վերջանան, կուզարկեմ ձեռ:

Գրիգոր Նիկողոսեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Berliner Tageblatt» լրագրի վերջին համարներից մէկի մէջ տպված է հետեւեալ տարբերակ յայտարարութիւնը: «Երկուստարդ ազգիկ ազնիւ ծագումն և շատ հարուստ ընտանիքից, գեղեցիկ օրպէս շեղինէ, անտես ոչ պակաս զննելաւորից, խելօք օրպէս տիկին Ստալ, երգում է ռուսից փէնի Լինդի նման, պարում է Չերիտոի նման, պիանոի վրա ամում է, որպէս Բոզա կաստնէր, փոխելի վրա օրպէս Տերեզիտա Միլանո, արքի վրա ամում է Լաբերտանի նման, մօզակեան աշխատութիւնները կատարում է Մարիա Որէլանեան դքսուհու նման, խիստ է օրպէս Լուկրէցիան, մեծ կարողութեան տէր է, տղամարդկանց հետ ծանօթութիւն չունենալու պատճառով, լրագրի միջոցով ամուսին է օրոնում»:

ՄԵԾԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 30 սեպտեմբերի: Սեպտեմբերի 29-ին Էկսպերտների խորհուրդը որոշեց, այն հիմնարկութիւնները, որոնք կազմում են խմբքների խանութների ցուցակը խանութատերերին սրանց բաշխան իրաւունքը տալուց առաջ, պէտք է հողատերերի համաձայնութիւնը ստանան խանութի համար փորձատրութեամբ տեղ տալու մասին: «Правит. Вѣстн.» լրագրից հաղորդում է, սեպտեմբերի 4-ի օրէնքի հիման վրա կազմված է առանձին խորհուրդ վարական աքտայնքի գործերը քննելու համար միմարտի օգնական Չերեվինի նախադասութեամբ, մասնակցութեամբ Եփրէյմով, Պրիլիպիկ սենատի անդամների իսկ ներքին գործերի միմարտութեան կողմից խորհուրդին կը մասնակցեն Զուրով և Յան.Պրիլիկ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 հոկտեմբեր: լրագրից հաղորդում են, սեպտեմբերի 30-ի նիստին Էկսպերտները վերջացրին վիճարկութիւնները յոգեւած խմբքների հասարակական խանութներին: Բարձրացրած է նոր հարց խմբքների առեւտրի զանազան ձեւերի մասին: Երեք նախադէր ընդունված են 25 ձայների մեծամասնութեամբ 4-ի զէմ: Թոյլ կը արկեն երկու տեսակ խանութներ, մէկը բացառապէս խմբքները ծախելու խանութից դուրս տանելու համար, իսկ միւսը խանութի մէջ խմբելու համար: Ս. Պետերբուրգ հասան. Շուվալով, Սիբորեւի, Տօլկաբեն և Ալեքսեյեւի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 30 սեպտեմբեր: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 96 ռ. 19 Կ., երկրորդ 93 ռ. 12 Կ., երրորդ 93 ռ. 75 1/2 Կ., չորրորդ 92 ռ. 37 Կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսեր արժէ 224 ռ., երկրորդ 218 ռ. 25 Կ., երեք եւնան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 90 ռ. 75 1/2 Կ., երկրորդ 90 ռ. 75 1/2 Կ., երկրորդ 91 ռ., Գալի 7 ռ. 63 Կ.: Իււսաց 1 ռ. 1 շեյնի վրա արժէ 26 պէնս, Ամստերդամի վրա 131 պէնս, Գոտայ 100 ռ. Համբուրգի վրա արժէ 221 մարկ 51 պֆ., փարիզի վրա արժէ 274 ֆրանկ 25 սանտիմ: Բուրայի տրամադրութիւնը հանդիսա է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ